ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 07.02.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-06/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-06/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից 18.01.2013թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-06/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. **«Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն հայտնել է, որ վերջինս մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12-ՀՀ ՊՆ ՆՏԱՊ-ՇՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգին:

Նշված ընթացակարգի հրավերով նախատեսվել է, որ հայտ պարունակող ծրարները կբացվեն ՀՀ պաշտպանության նախարարության վարչական շենքում՝ Բագրևանդի 5 հասցեով, նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ՏՎ և ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում, 2013թ. հունվարի 16-ին ժամը 11:00-ին, սակայն ծրարները հրավերով սահմանված ժամին հանձնելուց հետո հանձնաժողովի քարտուղարը հայտարարել է, որ հայտերի բացումը հետաձգվում է և հայտերը կբացվեն նույն օրը ժամը 14:00-ին, որից հետո հայտերի բացման նիստը տեղի է ունեցել նույն օրը ժամը 14:00-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտերը բացվում են հրավերով նշված պահին հայտերի բացման

նիստում, իսկ հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ (այսուհետ՝ նաև Որոշում) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 110-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստը պետք է համընկնի հրավերով սահմանված հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

«Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն գտնում է, որ հանձնաժողովի կողմից խախտվել է օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով և որոշման 110-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները: Բողոքաբեր ընկերությունը գտնում է, նաև որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12 ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգի հրավերը չի համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին հետևյալ հիմնավորումներով.

1. Հրավերին կից պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, սահմանվել է, որ հունվար ամսվա պահանջարկի մատակարարումը պետք է իրականացվի մինչև հունվար ամսվա վերջը, իսկ մնացած ամիսների մատակարարումը մինչև տվյալ ամսվա 8-ը, մատակարարման վայրը՝ Երևանի կենտրոնական պարենային բազա:

Որոշման 110-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ՝ շրջանակային համաձայնագրով նախատեսված կարգով կնքվում է պայմանագիր: Ընդ որում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուի հետ պայմանագիր կնքող անձը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում, ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և ծառայության մատուցման ժամկետը պետք է սահմանվի առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագիր կնքելու օրվանից:

Ընկերությունը գտնում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տվյալ դեպքում չի պահպանվել որոշման 110-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված ապրանքների մատուցման ժամկետների հաշվարկը, այն է՝ ապրանքի մատակարարման ժամկետը պետք է սահմանվի առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագիր կնքելու օրվանից, քանի որ նշված ընթացակարգի հայտերի բացումը իրականացվել է 16.01.2013թ.-ին, իսկ պատվիրատուն սահմանել է, որ հունվար ամսվա պահանջարկի մատակարարումը պետք է իրականացվի մինչև հունվար ամսվա վերջը:

2. Հրավերին կից պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ մասնակիցն իրավունք ունի հայտը ներկայացնել գնման ենթակա ապրանքի անվանացանկի առանձին չափաբաժինների առանձին ծավալների համար:

Օրենքի 2-րդ հոդվածի 18-րդ կետի համաձայն գնման առարկա է հանդիսանում գնվող ապրանքը:

«Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն գտնում է, որ պատվիրատուի կողմից խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, քանի որ նշված ընթացակարգը բաղկացած է մեկ չափաբաժնից, իսկ գնման առարկան է հանդիսացել 199170 կգ արևածաղկի ձեթ ապրանքը:

Ելնելով վերոգրյալից «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված ««ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով շրջանակային համաձայանգրով գնում կատարելու ընթացակարգը:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 23.01.2013թ. N 04/032-105 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 18.01.2013թ. «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետև՝ նաև Պատվիրատու) 30.01.2013թ. N ԴՎԱ/251 գրությամբ «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնման ընթացակարգի հայտ պարունակող ծրարները, համաձայն ընթացակարգի հրավերի (ծանուցման), պետք է բացվեին ՀՀ պաշտպանության նախարարության վարչական շենքում՝ Բագրևանդի 5 հասցեով, նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ՏՎ և ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում 2013թ. հունվարի 16-ին ժամը 11:00-ին և քանի որ նույն վայրում՝ ՏՎ և ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում նախատեսված է եղել հայտերի (գնային առաջարկների) բացման ևս մի քանի նիստերի անցկացում, որոնցից երկուսը նախորդել են տվյալ ընթացակարգի հայտերի բացման նիստին և հայտերի քանակը շատ լինելու

պատճառով նիստի տևողությունը չնախատեսված չափով սկսվել է ձգձգվել, ուստի «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած և նիստին մասնակցել ցանկացողներին տեղեկացվել է բացման նիստի իրատեսական ժամկետը՝ նույն օրվա ժամը 14:00-ին: «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից լիազորված անձը ներկա է եղել այդ նիստին և ոչ մի առարկություն չի ունեցել ժամի վերաբերյալ: ՀՀ պաշտպանության նախարարությունը նշել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմը եղել է այդ բացման նիստին նախորդող ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների նույն կազմը, և նիստի ուշ սկսման պատճառ հանդիսացել է դա: Ավելին, այդ նիստից հետո ևս մեկ նիստ է անցկացվել նույն այդ գնահատող հանձնաժողովի կողմից, որին «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել, և նույնպես մասնակցել է նիստին և 2 չափաբաժինների մասով (արևածաղկի ձեթ՝ 510կգ, սուրճ՝ 39կգ) ճանաչվել որպես ընտրված մասնակից 827 և 2100 դրամով համապատասխանաբար, սակայն նրա կողմից չի բողոքարկվել նախատեսվածից ավելի ուշ, սակայն նույն օրը անցկացված նիստի վերաբերյալ:

Պատվիրատուն գտնում է, որ տվյալ օրը մի քանի նիստերի անցկացումը հանգեցրել է հաջորդող նիստերի անցկացման որոշակի ուշացմանը, որը վերջինս չէր կարող կանխատեսել, առավել ևս, որ այն չի հանգեցրել գնման ընթացակարգի կամ դրա արդյունքների փոփոխմանը, ինչպես նաև գնման ընթացակարգի մասնակիցների շահերի ոտնահարմանը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը նշել է, որ ինչ վերաբերում է հրավերին կից պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագրում մատակարարման ժամկետների վերաբերյալ նշումներին՝ «հունվար ամսվա պահանաջարկի մատակարարումը մինչև հունվար ամսվա վերջը, իսկ մնացած ամիսների մատակարարումը մինչև տվյալ ամսվա 8-ը, Երևանի կենտրոնական պարենային բազա», ապա տեխնիկական բնութագրերը կազմվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ, բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Այսինքն, քանի որ յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից 7-ը ներառյալ ոչ աշխատանքային օրեր են, ուստի տվյալ ամսվա մատակարարումները նախատեսվում են իրականացնել ամբողջ ամսվա ընթացքում: Եվ քանի որ մրցույթը պայմանով էր և չէր բացառվում որոշակի քանակի մատակարարումը նախատեսել նաև 2014թ. հունվար ամսվա ընթացքում, ուստի մասնակիցների համար ամբողջական պատկերացում կազմելու նպատակով գնման առարկան նկարագրվել է հնարավորիս հստակ:

Բացի այդ, հրավերով նախատեսված է եղել մատակարարման ժամկետը՝ «Ապրանքը կմատակարարվի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում պայմանագրին կից կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում»: Այսինքն, այդ դրույթը ոչ մի պարտավորություն չի առաջացնում և մատակարարման իրական ժամանակացույցը պետք է սահմանվեր պայմանագրին կից համաձայանագրով, որի ժամանակ հաշվի է առնվում Կարգի 110-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջը:

Ըստ Պատվիրատուի վերջինս քաջ գիտակցում և լավ պատկերացնում է, որ նույնիսկ գնային առաջարկների բացման նիստի օրը տվյալ մասնակցին հաղթող ճանաչելու, իսկ նիստին հաջորդող օրը պայմանագիր կնքելու որոշման հայտարարության հրապարակման (տվյալ դեպքում, քանի որ գնման գինը գերազանցում է 50մլն. դրամը, ուստի անգործության նվազագույն ժամկետը սահմանվում է առնվազն 10 օրացուցային օր) և այդ ընթացքում որևէ բողոքարկում չլինելու դեպքում նույնիսկ հնարավոր չի լինի 2013թ. հունվար ամսին կնքել պայմանագիր, էլ ուր մնաց 2013թ. հունվար ամսվա համար մատակարարման որոշակի նախատեսելուն և մինչև հունվար ամսվա վերջ մատակարարում իրականացնելուն:

Ինչ վերաբերում է նրան, որ հրավերում նշված է եղել, որ մասնակիցն իրավունք ունի հայտ ներկայացնել գնման ենթակա ապրանքի անվանացանկի առանձին չափաբաժինների առանձին ծավալների համար, ապա Պատվիրատուն հայտնել է, որ դա վրիպակի հետևանք է, որը ոչ մի ձևով չի շեղել մասնակցին, չի զրկել նրան ճիշտ հայտ ներկայացնելուց, առավել ևս, որ հրավերի 1-ին էջում մուգ տառերով հստակ նշված է եղել, որ «Ապրանքը ներկայացված է 1 չափաբաժնով», իսկ պայմանագրի նախագծում՝ գնման ենթակա ապրանքի անվանումը, պահանջվող քանակը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

ՀՀ պաշտպանության նախարարությունը Կենտրոնին ներկայացված իր գրությամբ հայտնել է, որ «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի ոչ մի կետ չի խոչընդոտել և սահմանափակել որևէ մասնակցի հայտ ներկայացնելու իրավունքը, առավել ևս իրենը:

Ամփոփելով այս ամենը, ինչպես նաև ստեղծված իրավիճակը ամբողջական և պարզ լինելու համար պատվիրատուն տեղեկացրել է նաև, որ «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար և նա ճանաչվել է որպես ընտրված մասնակից, որի մասին մասնակիցը քաջատեղյակ է և բողոքում այդ մասին ոչ մի ձևով նույնիսկ չի նշել: Եվ ընդհանրապես, անհասկանալի է մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության բողոքը տվյալ ընթացակարգը չեղյալ համարելու մասին:

3. ԳԲԽ-06/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից 18.01.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել «ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու որոշումը:

4. ԳԲԽ-06/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-06/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից 18.01.2013թ. ներկայացված բողոքը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետև՝ նաև Պատվիրատու) «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին հասցեագրված 30.01.2013թ. N ԴՎԱ/251 գրությունը և դրան կից փաստաթղթերը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.01.2013թ. կայացած նիստի N 1 արձանագրությունը և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ նաև Կենտրոն) եզրակացությունը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սննդամթերք ձեռք բերելու նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն:

«Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի հայտերի բացումը պետք է տեղի ունենար ՀՀ պաշտպանության նախարարության վարչական շենքում՝ Բագրևանդի 5 հասցեով, հունվարի 16-ին, ժամը 11:00-ին, սակայն հայտերը բացվել են նույն օրը ժամը 14:00-ին:

ՀՀ պաշտպանության նախարարությունը Կենտրոնին ներկայացված 30.01.2013թ. N ԴՎԱ/251 գրությամբ այդ կապակցությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-

ՇՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնման ընթացակարգի հայտ պարունակող ծրարները, համաձայն ընթացակարգի հրավերի (ծանուցման), պետք է բացվեին ՀՀ պաշտպանության նախարարության վարչական շենքում՝ Բագրևանդի 5 հասցեով, նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ՏՎ և ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում 2013թ. հունվարի 16-ին ժամը 11:00-ին, սակայն բացվել են նույն օրը ժամը 14:00-ին, քանի որ նույն վայրում՝ ՏՎ և ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում նախատեսված է եղել հայտերի (գնային առաջարկների) բացման ևս մի քանի նիստեր, որոնցից երկուսը նախորդել են տվյալ ընթացակարգի հայտերի բացման նիստին և հայտերի քանակը շատ լինելու պատճառով նիստի տևողությունը չնախատեսված չափով ձգձգվել է մինչև ժամը 14:00-ն: Այսինքն տվյալ օրը մի քանի նիստերի անցկացումը հանգեցրել է հաջորդող նիստերի անցկացման որոշակի ուշացմանը, որը Պատվիրատուն չէր կարող կանխատեսել: ՀՀ պաշտպանության նախարարությունը նշել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմը եղել է այդ բացման նիստին նախորդող ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների նույն կազմը, և նիստի ուշ սկսման պատճառ հանդիսացել: Ավելին, այդ նիստից հետո ևս մեկ նիստ է անցկացվել նույն այդ գնահատող հանձնաժողովի կողմից՝ որին «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել, և նույնպես մասնակցել է նիստին և 2 չափաբաժինների մասով (արևածաղկի ձեթ՝ 510կգ, սուրճ՝ 39կգ) ճանաչվել որպես ընտրված մասնակից 827 և 2100 դրամով համապատասխանաբար, սակայն նրա կողմից չի բողոքարկվել նախատեսվածից ավելի ուշ, սակայն նույն օրը անցկացված նիստի վերաբերյալ: Պատվիրատուի ներկայացուցիչները նույն դիրքորոշումը պնդեցին նաև Կենտրոնում 2013 թվականի հունվարի 30-ին կազմակերպված բանավոր լսումների ժամանակ:

ՀՀ պաշտպանության նախարարության 28.12.2012թ. N 1793 հրավերի (ծանուցման) մեջ նշվել է, որ հայտ պարունակող ծրարները կբացվեն ՀՀ պաշտպանության նախարարության վարչական շենքում՝ Բագրևանդի 5 հասցեով, նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ՏՎ և ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում, 2013թ. հունվարի 16-ին, ժամը 11:00-ին: Մինչդեռ հայտերի բացման նիստը տեղի է ունեցել ոչ թե 16.01.2013թ. ժամը 11:00-ին, այլ նույն օրը ժամը 14:00-ին, ինչն արձանագրվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.01.2013թ. կազմված N 1 արձանագրությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտերը բացվում են հրավերում նշված պահին՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 110-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստը պետք է համընկնի հրավերով սահմանված հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Հրավերի 7.1-կետի համաձայն՝ հայտերը բացվում են ծանուցման մեջ նշված ժամկետին և վայրում:

Պատվիրատուի կողմից Ընթացակարգին մասնակցելու 28.12.2012թ. N 1793 ծանուցմամբ հայտերի ներկայացման վերջնաժամկետ և հայտերի բացման ժամկետ է սահմանվել 2013թ. հունվարի 16-ի ժամը 11:00-ն:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 110-րդ կետի 3-րդ ենթակետով, Հրավերի 7.1 կետով և Պատվիրատուի կողմից Ընթացակարգին մասնակցելու 28.12.2012թ. N 1793 ծանուցմամբ սահմանված պահանջները:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ այս հիմքով բողոքը հիմնավոր է:

«Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն նշել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգի հրավերը չի համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, քանի որ նշված ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 16.01.2013թ., իսկ հրավերին կից պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ հունվար ամսվա պահանջարկի մատակարարումը պետք է իրականացվի մինչև հունվար ամսվա վերջը, իսկ մնացած ամիսների մատակարարումը մինչև տվյալ ամսվա 8-ը, մատակարարման վայրը՝ Երևանի կենտրոնական պարենային բազա:

ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ տեխնիկական բնութագրերը կազմվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ, բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Այսինքն, քանի որ յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից 7-ը ներառյալ ոչ աշխատանքային օրեր են, ուստի տվյալ ամսվա մատակարարումները նախատեսվում են իրականացնել ամբողջ ամսվա ընթացքում: Եվ քանի որ մրցույթը պայմանով է եղել և չէր բացառվում որոշակի քանակի մատակարարումը նախատեսել նաև 2014թ. հունվար ամսվա ընթացքում, ուստի մասնակիցների համար ամբողջական պատկերացում կազմելու նպատակով գնման առարկան նկարագրվել է

հնարավորինս հստակ: Բացի այդ, հրավերով նախատեսված է եղել մատակարարման ժամկետը՝ «Ապրանքը կմատակարարվի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում պայմանագրին կից կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում»: Այսինքն, այդ դրույթը ոչ մի պարտավորություն չի առաջացնում և մատակարարման իրական ժամանակացույցը պետք է սահմանվեր պայմանագրին կից համաձայանագրով, որի ժամանակ հաշվի է առնվում Կարգի 110-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջը: Ըստ Պատվիրատուի վերջինս քաջ գիտակցում և լավ պատկերացնում է, որ նույնիսկ գնային առաջարկների բացման նիստի օրը տվյալ մասնակցին հաղթող ճանաչելու, իսկ նիստին հաջորդող օրը պայմանագիր կնքելու որոշման հայտարարության հրապարակման (տվյալ դեպքում, քանի որ գնման գինը գերազանցում է 50մլն. դրամը, ուստի անգործության նվազագույն ժամկետը սահմանվում է առնվազն 10 օրացուցային օր) և այդ ընթացքում որևէ բողոքարկում չլինելու դեպքում նույնիսկ հնարավոր չի լինի 2013թ. հունվար ամսին կնքել պայմանագիր, էլ ուր մնաց 2013թ. հունվար ամսվա համար մատակարարման որոշակի նախատեսելուն և մինչև հունվար ամսվա վերջ մատակարարում իրականացնելուն: Պատվիրատուի ներկայացուցիչները նույն դիրքորոշումը պնդեցին նաև Կենտրոնում 2013 թվականի հունվարի 30-ին կազմակերպված բանավոր լսումների ժամանակ:

Այսինքն, ըստ պատվիրատուի դիրքորոշման, այդ դրույթը ոչ մի պարտավորություն չի առաջացնում և մատակարարման իրական ժամանակացույցը պետք է սահմանվեր պայմանագրին կից համաձայանագրով, որի ժամանակ հաշվի է առնվում Կարգի 110-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, նույն օրենքով սահմանված կարգով, կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Պատվիրատուի կողմից Ընթացակարգին մասնակցելու 28.12.2012թ. N 1793 ծանուցմամբ ներկայացված պայմանագրի նախագծի.

- 1.2 կետով սահմանվել է, որ ապրանքը կմատակարարվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, համաձայնագիր կնքելու միջոցով.
- 9.1 կետի համաձայն պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ համաձայնագրի կնքման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ

գնումը իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում.

- տեխնիկական բնութագրով՝ 1-ին հավելվածով սահմանվել է, որ հունվար ամսվա պահանջարկի մատակարարումը պետք է իրականացվի մինչև հունվար ամսվա վերջը, իսկ մնացած ամիսների մատակարարումը մինչև տվյալ ամսվա 8-ը.
- գնման ժամանակացույցով՝ 2-րդ հավելվածով, սահմանվել է, որ ապրանքը կմատակարարվի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում պայմանագրին կից կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում»:

Այսպիսով, թեև ծանուցմանը կից պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ հունվար ամսվա պահանջարկի մատակարարումը պետք է իրականացվի մինչև հունվար ամսվա վերջ, սակայն նույն պայմանագրի 1.2, 9.1 կետերի գնման ժամանակացույցի՝ 2-րդ հավելվածի համաձայն՝ մատակարարման նշված ժամկետը նախնական է եղել և պետք է հստակեցվեր լրացուցիչ համաձայնագիր կնքելիս:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ բողոքն այս հիմքով հիմնավոր չէ:

«Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն բողոքով հայտնել է, որ նշված ընթացակարգի տեխնիկական բնութագրով սահմանված է, որ մասնակիցն իրավունք ունի հայտը ներկայացնել գնման ենթակա ապրանքի անվանացանկի առանձին չափաբաժինների առանձին ծավալների համար, մինչդեռ սահմանվել է մեկ չափաբաժին՝ արևածաղկի ձեթ ապրանքի տեսակով:

ՀՀ պաշտպանության նախարարությունը վերոգրյալի կապակցությամբ հայտնել է, որ դա վրիպակի հետևանք է: Պատվիրատուի ներկայացուցիչները նույն դիրքորոշումը պնդեցին նաև Կենտրոնում 2013 թվականի հունվարի 30-ին կազմակերպված բանավոր լսումների ժամանակ և հավելեցին, որ այն որևէ կերպ չի խոչընդոտել մասնակիցների, մասնավորապես բողոքաբեր ընկերությանը Ընթացակարգին մասնակցելուն:

Պատվիրատուի կողմից Ընթացակարգին մասնակցելու 28.12.2012թ. N 1793 ծանուցմամբ սահմանվել է, որ ապրանքը ներկայացված է մեկ չափաբաժնով: Նույն ծանուցմանը կից պայմանագրի նախագծի գնման ժամանակացույցով՝ 2-րդ հավելվածի ծանոթությամբ սահմանվել է, որ Մասնակիցն իրավունք ունի հայտը ներկայացնել գնման ենթակա ապրանքի անվանացանկի.

- ամբողջ ծավալի համար.
- առանձին չափաբաժինների ամբողջ ծավալի համար.
- առանձին չափաբաժինների առանձին ծավալների համար:

Հաշվի առնելով, որ գնման ենթակա ապրանքը ներկայացված է եղել մեկ չափաբաժնով, առանձին չափաբաժիններ և դրանց գնահատման ու համեմատման կարգ ծանուցմամբ նախատեսված չեն, հետևաբար Պատվիրատուի այն հավաստումը, որ «առանձին չափաբաժինների առանձին ծավալների համար» հայտ ներկայացնելու հնարավորություն նախատեսելը վրիպակի արդյունք է, հիմնավոր է:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ բողոքն այս հիմքով հիմնավոր չէ:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից 18.01.2013թ. ներկայացված բողոքը բավարարել:

2. Դադարեցնել «ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու որոշումը:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Արման Մնացականյան

Անդամ՝ Հրաչյա Ավետիսյան